ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 04/11.2/13582-13

«18» 11 2013թ.

**<<Ինֆորմացիոն ազատության**
**կենտրոն>> ՀԿ իրավաբան**
**պարոն Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Հայրապետյան**

Ի պատասխան Ձեր 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 211-ի 4 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» որոշման նախագիծը 2013 թվականի ընթացքում քննարկվել է հանրապետական գործադիր մարմինների և Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի հետ:

Վերջիններիս կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակված որոշման նախագիծը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2013 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 01/11.2/13175-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Տեղեկացնում եմ, որ որոշման նախագծի թարմացված տարբերակը տեղադրված է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքում:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը պատրաստակամ է քննարկել Ձեր առաջարկությունները:

Հարգանքներով՝

**Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Կապի և տեղեկատվայնացման վարչություն
590066

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28
Հեռ.՝ (374 10) 59 00 03, Ֆաքս՝ (374 10) 56 13 87, էլ. փոստ՝ a.aleksanyan@mtc.am